



ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ

ԳԻՏԵԼԵԱՑ

ԺԳ. ՏԱՐԻ. ԹԻԻ 10.

1855

ՄԱՅԻՍԻ 15.

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Դ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Գ Լ Ո Ւ Ի Ե .

Բնական խնամք : (Տես կրես 81)

Ա. Աղէկ օր :

Իրենց արուեստին ու շատ փորձէ անցնելուն պատճառաւ հմուտ եղող մարդիկ՝ առանց տարակուսի մը կ'ըսեն որ աղէկ օրն է առողջութեան ու կենաց առաջին պայմանը, նաև աղէկ սրնունդէն ալ աւելի . Օրն ճարակ կենաց :

Եւ յիրաւի, աղէկ օրը լաւ արիւն կ'ընէ, լաւ մարտողութիւն կը պատրաստէ ու կու տայ : Մեր կենդանութիւնը թէ պէտ օրէն չէ, բայց անոր տարակոյս

չկայ՝ որ աղէկ օրը մեր գործարաններուն սնունդ և ոյժ կու տայ, իսկ գէշը լաւ սնունդն ալ կ'ապականէ :

Աւրեմն վերջի աստիճանի հարկաւոր է որ դաստիարակութե տեղուանք լաւ դիրք ունենան, առողջարար կողմն ըլլան, և իրենց հասարակաց դահլիճները ընդարձակ ու օդ բանող . և աւելի լաւ կ'ըլլայ թէ որ գեղ տեղ շինուած ըլլան, կամ գէթ չորս դին ընդարձակ հրապարակներ, պարտէզներ ու մարգագետիններ ըլլան :

Տան մը օրը լաւ մաքուր պահելու

համար միշտ արթնութիւն ընելու է , մանաւանդ որ տղայք այս կողմանէ ան փոյթ կ'ըլլան . թէպէտ և երբեմն կերակրոյ կողմանէ չեն հաւնիր ու տժգոհութիւն կ'ընեն , բայց օգուն առողջ կամ անառողջ ըլլալուն , թանձր կամ անօսր ըլլալուն ամենեւին հոգ փոյթ չեն ըներ : Եւս կողմանէ պէտք է ամէն կերպով արթուն կենալ : Անդամի ու յստակ օգը միշտ ու անդադար փոփոխուելով , մեծ ու կարևոր ազդեցութիւն կ'ընէ՝ չէ թէ միայն առողջութեան վրայ , հապա՛ այս ալ աւելցնենմ՝ թէպէտ և կարգէ դուրս երեւայ խօսքս , նաև բոլոր վարժարանին բարեկարգութեանը վրայ :

Բ . Սնունդ :

Ստեղծող պէտք է որ առողջարար ու առատ ըլլայ . ոչ որպիսութիւնն ու ոչ քանակը պակսութիւն պիտի ունենայ . բայց միանգամայն պէտք չէ չափազանց ըլլայ ու աւելորդ փափկութիւն ունենայ :

Վարժարանի մը մեծաւորը պէտք է ամէն օր այս բաներուս կողմանէ ապահով ըլլայ , և անոր համար անձամբ պիտի քննէ ամէն բան : Որչափ որ հարկաւոր է կերակուրներուն կողմանէ պարզութիւնը , սակաւապիտութիւնն ու ժուժկալութիւնը , և ինչպէս ամենեւին պէտք չէ որ կարգէ դուրս ու բարակ , համեմեալ ու խիստ ախորժահամ ըլլան , այնչափ բոլորն ալ պէտք է լաւ ըլլան : Ինտիր հաց ու միշտ աղէկ եփուած . միսը ամենէն աղէկը . ոչ երբէք երկրորդ աստիճանի բան : Անդամուոյն աւելի պատուական ու աւելի սննդարար մասերը . լաւ ընդեղէն , զորն որ ձմեռուան պաշարի համար պէտք է այն գաւառներէն բերել տալ՝ որ անուանի եղած են այս կողմանէ : Եւսն եղանակի պտուղները պէտք է հասուն ըլլան . խմորեղէնները լաւ շինուած : Պաքի օրուան ձկները թարմ ըլլան : Ձէթը առաջին կարգի , ու քացախը ընտիր . իսկ գինին աղէկ և ուժով , որ տղոց

խառնուածոյն համեմատ ըմպելիք ըլլայ , թէթեւ , առողջարար ու ախորժելի քմաց :

Ղազկերտաց ու վարժապետաց ապրուստին կերպը որչափ որ կարելի է նոյն պիտի ըլլայ . բայց միայն երբ հասակը , աշխատութիւնը , կամ երբեմն հիւանդութիւնը և ուղիղ խելքը ցուցնէ որ զանազանութիւն մը ընել հարկաւոր է : Սակայն միշտ նոյն տեսակ կերակուր , նոյն սեղանը , նոյն պատրաստութիւնը , նոյն ծառայութիւնը :

Հացը միշտ ըստ պիտոյից պէտք է տալ : Բայց տղոց ալ իմացնելու է որ այդ վստահութեանը պատճառաւ իրենք ալ ինչ պարտք կ'ունենան , ինչ զգուշութիւն , ինչ մեծարանք թէ իրենց և թէ ուրիշին . և մանաւանդ ինչ մեծարանք Եստուծոյ և աղքատաց . Եստուծոյ , որ հացը կու տայ , ու աղքատաց , որ չունին անիկայ :

Չէ թէ ոտքի տակ առնելու , նետելու , փձացնելու , աղտոտելու համար Եստուծոյ նախախնամութիւնը իրենց առատ հաց տուեր է . հապա պարկեշտութեամբ գործածելու համար , ինչպէս որ բարեկիրթ տղայոց կը վայելէ . ու բարեպաշտութեամբ , ինչպէս քրիստոնեայ տղոց պատշաճ է :

Եսոնք են լաւ խնամքները որ պէտք է ընել ուտելեաց կողմանէ :

Բայց միթէ կարելի է որ այդ հոգացողութիւնը ունենալէն ետև ալ ամէն բան այնպէս կատարեալ ըլլայ , ինչպէս որ մարդ կը փափաքի :

Չէ . անոր համար պէտք է տղայքը սորվեցնել որ անտրտունջ համբերեն անխորշելի ու առժամանակեայ անպատշաճութեանց , որոնցմով իրենց առողջութեանը փնտս մը չըլլար : Պէտք է որ գիտնան՝ թէ շատ անգամ նաև հարուստներու տունը , նոյն իսկ թագաւորներու պալատը ինչպէս որ պէտք է ծառայութիւնը չըլլար : Եւ միանգամայն այս ալ իրենց հասկըցնելու է , որ և ճշմարիտ է , թէ այն տղայքը աւելի կը տրտնջան , որոնք որ աւելի խեղճ կ'ապրէին իրենց տունը , կամ թէ անոնք

որոնց վրայ որ իրենց տունը չափազանց հոգ ըլլալով՝ աւրուեր են, ու իրենց մարմինը աւելի սնունդ աւեր է՝ քան թէ իրենց հոգին :

Ընդհար որ կերակրոյ վրայ գանգատելու գէշ ախտն ունին, այլ և այլ չար ու նակութեանց հետեւելով կ'ընեն. ոմանք տհաճութի կը ցուցնեն մարմնապաշտ ըլլալուն, ոմանք ընդունայնասիրութեան համար, և ոմանք ալ չար օրինակի ետեւէ երթալով՝ անմտութեամբ ու տկարութեամբ :

Դաստիարակը իբրև հայր պէտք է իր զաւակացը արդարակի՛ն ըլլայ :

Պարտական է իր խղճմտանքովը վկայէ՝ որ ամենեւին տղայոց մէջէն մէկու մը հարստութեանը, ազգատոհմին կամ աշխարհային վիճակին առաւելութեանը համար աւելի խնամք չէ ցուցուցեր քան զուրիշները :

Հոգին, մտաց և սրտի կատարելութիւնները, գիտութեան և առաքինութեանց ակնկալութիւնները, ահա ասոնք են՝ որոնց համար տղուն վրայ պէտք է սէր ունենալ. իսկ իմաստուն դաստիարակի մը տղոցմէ մէկուն վրայ աւելի հոգ ունենալու պատճառը պիտի ըլլայ տղուն տկարութիւնն ու բնական անկարողութիւնը, և ոչ թէ անոր անկիրթ պահանջմունքները, կամ ինքնա հաճոյ փափկասիրութիւնները :

Ընկեղծութեամբ եկէք ինձի, երբեմն երբեմն կ'ըսէի իմ տղոցս, այսինքն վստահութեամբ և պատկառանքով. ձեր պատշաճական պէտքերը ըսէք ինձի, ինչպէս ձեր հօրը մօրը կ'ըսէիք : Արցածիս չափ բանի մըն ալ չեմ խնայեր ձեր պէտքը լեցնելու համար. բայց հոս ամենեւին ոչ գանգատ և ոչ տրտունջ պիտի ըլլայ : Իսկ թէ որ այդպիսի տմարդութիւն մը ընելու միտք ունիք, մէկէն՝ ի մէկ առաջուցմէ այս դպրոցէն ելէք գացէք. կամ անմիջապէս ետքը ես ձեզի կ'ըսեմ որ երթաք :

Բայց այս կողմանէ անմտածողներուն խելքը բանալու համար երբեմն իրենց կը կարդայի՝ թէ ինչ կերպով Սուրբ Գրքի ու Սքեներն Պար-

կոնեի դուքսը ու իր եղբայրները կը բռնէին : Այս հետաքրքրական մանրամասն ստորագրութիւնը տարակոյս չունիմ որ իմ ընթերցողացս ալ օգտակար ըլլայ :

« Ետ հասարակ կերպով կ'ապրին. անմէն անգամ սեղանի վրայ որչափ որ կ'ուզեն կրնան ուտել. բայց առողջաբար բաներ միայն կու տան իրենց : Ըտուն՝ ցամաք հաց միայն. ու մեծ գաւաթ մը ջրախառն գինի, կամ պարզ ջուր, որն որ իրենք ուզեն :

« Աշու և ընթրեաց ատեն առջևնին դրածներէն որչափ որ ուզեն կըրնան ուտել. բայց միայն վրանին ու շաղրութի կ'ըլլայ՝ որ աւելի հաց ուտեն, իսկ չեփած պտուղ՝ խիստ քիչ :

« Իսկ շաբթուան մէջ երեք օր կայ, որ համարածի օր են, ու միայն կէսօրուան կերակրոյ :

« Ուրիշ օրեր, կէսօրը խաշած եղանակով, ու խորովածը կ'ըլլայ վառեակ, հաւ ու կաքաւ :

« Ընթրիքը միշտ միակերպ է. ոչ խարի կամ հորթու ազգրը, կամ եզան կունակը, հետը վայրի որս կամ թռչնեղէն, առանց համադամի. իսկ պտղոյ տեղ ծեծած նուշի անուշեղէն կամ շաքարոտած նարնջի կեղև :

« Ախորուան ու իրիկուան կերակրոյն մէջտեղի միջոցը՝ ուրիշ բան չեն կրնար ուտել, բայց եթէ՝ առաւօտեան պէս ցամաք հաց. շատ շատ բունչոր խմորեղէն մը, ու գաւաթ մը ջուր :

« Յորեկ և իրիկուն ուզեն կրնան գինի խմել, (կ'ըլլայ երբեմն որ չեն ուզեր խմել). և միշտ Պուրկոնեի գինի կը խմեն, ու երկու անգամ միայն : Ալ երբեք կը խմեն գարեջուր, ոչ տանձօղի, ոչ ցքիախառն գինի, և ոչ ուրիշ ու իցէ զովացուցիչ ջրեր, բայց միայն երբոր զուարճութեան օր մը ըլլայ, որ խիստ քիչ կը հանդիպի » :

1 Այդ ըսած միջոցը Հայաստան տեղ կայ որ Հրամգայ կ'ըսեն, և ուտելիքը՝ Հրամայ : Բունչոր խմորեղէն ըսինք Գաղղիացուց Biscuit ըսածին :

